ՀՏԴ 39(479.25)

Doi:10.54503/0135-0536-2024.2-235

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 5, խմբ.՝ Ա. Ա. Բոբոխյան, Տ. Ս. Դալալյան, Ն. Խ. Վարդանյան, *Երևան, ՀԱԻ հրատ., 2023, 280 էջ**:

Բանալի բառեր՝ Անտիոք, Քեսաբ, պատմաազգագրական ուսումնասիրություն, բանահյուսություն, բարբառ և բարբառագիտություն, ավանդազրույց, դավանանք:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ (ՀԱԻԱ) պարբերականի 5-րդ հատորը հանրագումարի է բերում հնագիտության, ազգագրության, բանագիտության, մշակութային մարդաբանության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությունը: Ներկայացվող ժողովածուն ընդգրկում է ավելի քան մեկ տասնյակից ավել հետազոտողների ուսումնասիրություններ: Ժողովածուն բաղկացած յոթ բաժնից (I. «Հուշարձաններ և գտածոներ», II. «Ավանդույթ և արդիականություն», III. «Պար և ծես», IV. «Բանահյուսություն և լեզվամշակույթ», V. «Պոլսահայոց հիմնախնդիրներ», VI. «Հաղորդումներ», VII. «Մեր հոբելյարները»), հավելվածային «Լուսանկարներ և գծապատկերներ» և «Տեղեկություններ հեղինակների մասին» բաժիններից, որոնք, որոշ դեպքերում, ընդգրկում են միմյանց հարակից հիմնահարցեր, իսկ հոդվածներից որոշներն ունեն նաև միջդիտակարգային բնույթ:



I. «Հուշարձաններ և գտածոներ»

Բաժնում զետեղված հոդվածները վերաբերում են հնագիտական և վիմագրական ժառանգությանը: Հնագետ, պ. գ. թ. Բենիկ Վարդանյանը «Կուր-արաքսյան միջագետքի բրոնզե-երկաթեղարյան կեռերը» (էջ 8–25) հոդվածում կատարել է Կուր-արաքսյան կոչված հնագիտական մշակույթի միջին և ուշ բրոնզի ու երկաթի դարաշրջանների կեռերի տիպաբանական, ժամանակագրական և գործառութային դասակարգում՝ առանձնացնելով հինգ տիպ: Հեղինակը մանրամասն քննում է կեռերը կառուցվածքային տեսանկյունից՝ դրանք համադրելով ժամանակագրական և գործառութային հատկանիշներին՝ հանգելով կարևոր եզրահանգումների: Ըստ հետազոտողի՝ առաջին տիպի միաճանկ կեռերը հանդիպում են դամբարաններում առկա կաթսաների համատեքստում, ինչը վկայում է դամբանատիրոջ սոցիալական բարձր կարգավի-

* *Ներկայացվել է 29. V. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

ճակի մասին, իսկ երկրորդ տիպի երկճանկ կեռերը փաստագրվում են կա՛մ աճյունի մոտ դրված, կա՛մ վերին վերջույթների շրջանում, որոնք, ներկայացվելով որպես մական, հանդես են գալիս իբրև իշխանության խորհրդանիշ: Այսպիսով, առանձնացված հինգ տիպի կեռերը հանդիպում են միջին բրոնզի, ուշ բրոնզի և երկաթի դարերում, իսկ վերոնշյալ երկճանկ ու միաճանկ կեռերը՝ խորհրդանշել ցլի պատկերումով որևէ աստվածություն:

Հետաքրքիր է հնագետ Հենրիկ Դանիելյանի ««Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝ Արագած լեռան հարավային լանջի ամրոցների օրինակով» (էջ 26–36) ուսումնասիրությունը, որում հետազոտողն անդրադառնում է ներկայացվող տարածքի կարևոր նշանակությանը՝ մասնավորապես՝ բրոնզե-երկաթեդարից մինչև միջնադար ընկած ժամանակահատվածին: Հեղինակը ներկայացնում է տարածքի աշխարհագրական դիրքը, ամրոցների կառուցվածքային պատկերը՝ ցույց տալով այդ կառույցների՝ պաշտպանական համակարգ լինելը: «Կիկլոպյան» ամրոցները (ամրացված բնակատեղի, ամրոց, ամրացված սրբատեղի, դղյակ), հսկայական հեկտարներ գրավող դամբարանները, միջնադարյան վիմագրական կոթողները հնարավորություն են տալիս ենթադրելու տվյալ տարածքի խիտ բնակեցման մասին: Հնագետը ներկայացվող հետազոտության մեջ օգտագործել է նորագույն մեթոդներից GIS համակարգը և առկա տվյալները համադրելով ու քարտեզագրելով՝ հանգել է հետևյալին. «կիկլոպյան» ամրոցները խմբավորվել են ջրագրական հարուստ համակարգ ունեցող Ամբերդ և Շահվերդ գետերի ու լեռնային կիրճերով անցնող ճանապարհների կարևոր հանգույցում: Այս տարածքը ռազմավարական հանգույց է եղել՝ կապելով Արարատյան դաշտը և՛ Ջավախքին, և՛ Թռեղքին կապող ճանապարհները:

«Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները» (էջ 37–44) հոդվածում հնագետ Լևոն Մկրտչյանը *քննել է ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերի միջև ձգվող ժայռոտ բլրակներով տարածքը: Հեղինակն իր ուսումնասիրության մեջ օգտագործել է ոչ միայն դաշտային աշխատանքների արդյունքները, այլև դրանք համադրել է արխիվային նյութերին՝ օդալուսանկարելով, լուսանկարների հիմքի վրա աշտարակների օրտոֆոտոպլանների ու տեղահանույթների կազմումով, ինչպես նաև՝ տվյալների բազայի ստեղծումով և գոտու քարտեզագրմամբ: Ըստ նրա՝ աշտարակատիպ կառույցները հուշարձանների պետական ցանկերում ոչ-իրավացիորեն վկայագրվում են որպես «դիտակետ-աշտարակներ»: Հետազոտողը, հնագիտական տվյալները համադրելով վերլուծական մեթոդների հետ, հանգում է Աշխարհբեկ Քալանթարի և Թորոս Թորամանյանի այն տեսակետին, որ այդ կառույցներն ունեցել են ծիսապաշտամունքային նշանակություն և այդ աշտարակներն ընդհանուր համակարգի մաս են կազմել:*

Հնագետ, պ. գ. թ. Արմինե Գաբրիելյանի *«Արցախի Տիգրանակերտի անտիկ շրջանի դրոշմազարդ խեցեղենը» (էջ 45–56) ուսումնասիրությունը փորձ է՝ ցույց տալու Տիգրանակերտում հայտնաբերված դրոշմազարդարման եղանակով հարդարված անոթները, ունեցած նշանակությունը և դրանցով պայմանավորված՝ Տիգրանակերտի՝ տարածաշրջանում առևտրամշակութային մեծ դերակատարում ունենալը: Հետազոտողը, խոսելով ողկուզակիր և եղևնազարդ անոթների մասին, նշում է, որ դրանցից առաջինը, թեև, դասական սևալաք*

խեցեղենի տեղական նմանակումն է: Այն, սակայն, բնորոշ է միայն տվյալ տարածաշրջանին, քանի որ Հայաստանյան անտիկ հուշարձաններում, բացի Տիգրանակերտից, նմանատիպ անոթներ դեռևս չեն հայտնաբերվել: Երկրորդ՝ եղևնագարդ անոթների տիգրանակերտյան օրինակները, ըստ Գաբրիելյանի, կարող են ուշ հելլենիստական կամ պարթևական խեցեղենի տեղական նմանակումը լինել: Հնագետն ամփոփելով՝ նշում է, որ վերոնշյալ դրոշմազարդ խեցեղենի օրինակները լրացնում են Հայաստանի անտիկ հուշարձաններից (Արտաշատ, Ավան, Երվանդաշատ) մինչ այսօր դրոշմազարդ խեցեղենի սակավաթիվ նմուշների շարքը, իսկ Տիգրանակերտի անտիկ շրջանի մշակույթի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունի վերոնշյալ ժամանակաշրջանի խեցեղենը:

«Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող հնագիտական գտածոներ Վայոց-ձորից» (էջ 57–65) հոդվածում հնագետ, պ. գ. թ. Ռուզան Փալաջյանն անդրադառնում է Վայոց ձորի տարածքի անտիկ ժամանակաշրջանի հնագիտական գտածոների միջոցով գինեգործությանն առնչվող խնդիրներին: Հեղինակը հնագիտական նյութը համադրում է բանագիտական-ազգագրական նյութին, ինչը հնարավորություն է տալիս ավելի լայն պատկերացում կազմել քննվող խնդիրների մասին: Ըստ Ռ. Փալաջյանի՝ Վայոց ձորի տարապանների թվագրումը հասնում է մ. թ. ա. I հազարամյակի կեսեր, և դրանք ծառայել են որպես մամլիչի հարթակ: Վայոց-ձորում հայտնաբերված քարե սալերը՝ տարապանները, երեքն են, որոնց կառուցվածի և գործառական նշանակության մասին մանրամասնորեն հայտնում է հեղինակը, և հայտնաբերված տարապանները կիրառվել են գինեգործության մեջ ևս: Հեղինակը ներկայացնում է գինիների պատրաստման տարբեր եղանակները, առանձնացնում անտիկ գինեգործության մեջ բարձր գնահատված չամիչից պատրաստված գինիները՝ եզրահանգելով, որ հայտնաբերված տարապանները հիմնականում նախատեսված են եղել հենց այդ տեսակի բարձրորակ գինիների արտադրության համար:

Հնագետ, պ. գ. թ. Դիանա Միրիջանյանի հետազոտությունը վերաբերում է միջնադարյան քարե տապանների տիպաբանական և ժամանակագրական ուսումնասիրմանը՝ «Հայաստանի միջնադարյան քարե տապանները» (էջ 66–75): Հեղինակն առանձնացնում է ուրարտական, անտիկ, վաղմիջնադարյան և զարգացած միջնադարի քարե տապանները՝ նշելով, որ դրանք Հայաստանի միջնադարյան թաղման կառույցների տեսակներից են, որոնք լայնորեն տարածված են եղել մասնավորապես վաղ միջնադարում: Այս շրջանին բնորոշ սարկոֆագները գրեթե միանման են եղել, սակայն կառուցվածքային տեսանկյունից հեղինակը դրանք բաժանում է հիմնական 5 տիպերի: Հետաքրքիր է սարկոֆագների ունեցած կիրառական նշանակությունը. նախաքրիստոնեական շրջանում սարկոֆագների ծածկասալերը հոգու մասին ժողովրդական հավատալիքների հետ կապ ունեն, քրիստոնեական շրջանում այդ անցքերը ծառայել են անասուններին ջրելու համար, օգտագործվել են նաև որպես ցորենի և այլուրի ամբարներ: Հեղինակը, մանրամասն ուսումնասիրելով քարե տապանները, ամբողջացնում է եղած փաստական տեղեկությունները և առավել ընդգրկուն պատկերացում տալիս դրանց տեսակների, կիրառության ու թվագրության մասին:

Ժողովածուի առաջին բաժինը եզրափակում է վիմագրագետ, պ. գ. թ. Արսեն Հարությունյանի «Տաթևի Մեծ անապատի վիմագրական ժառանգությունը» (էջ 76–93) հետաքրքրական ուսումնասիրությունը: Հեղինակը համառոտ անդրադառնում է Տաթևի Մեծ անապատի և նրա վիմագրերի վերաբերյալ նախորդ ուսումնասիրողների աշխատություններին, ապա ներկայացնում իր կատարած դաշտային և հետազոտական ուսումնասիրությունները: Հաշվի առնելով, որ անապատի վիմագրական ժառանգությունն ամբողջացված և պատշաճ ուսումնասիրված չէ, այս հոդվածը փորձ է՝ համալիր քննության ենթարկելու առկա նյութը: Հետազոտողը խոսում է Անապատի հիմնադրման, շինարարական վիմագրերի և տապանագրերի մասին: Դաշտային հետազոտական խումբը մեծ աշխատանք է կատարել՝ չափագրել բոլոր կոթողային հուշարձանները, լուսանկարել և գրչագրել արձանագրությունները և ամփոփելով կատարած վիմագրագիտական քննությունը՝ հեղինակն արձանագրում է, որ Տաթևի Մեծ անապատը հիմնադրվել է 1658 թ. երկրաշարժից հետո՝ կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու և տեղի վանահայր Արիստակես վարդապետ Տաթևացու նախաձեռնությամբ: Տապանագրերի վերծանության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ անապատի միաբանությունը ստվարացել է XVII դ. վերջին տասնամյակներից, այստեղ ճգնել ու սպասավորել են հիմնականում ծագումով Տաթևից և հարակից բնակավայրերից եկած վարդապետներ և այլ հոգևորականներ:

II. «Ավանդույթ և արդիականություն»

Ժողովածուի այս բաժնի հետազոտությունները նորովի են մեկնաբանում հայոց մեջ տեղ գտած ծիսահավատալիքային ընկալումները: Առաջին ուսումնասիրությունը բանագետ, պ. գ. թ. Նվարդ Վարդանյանի «Ավելի (ցախավելի) ծիսական կիրառությունները. ավանդական պատկերացումների վերապրուկները մեր օրերում» (էջ 96–108) հոդվածն է, որտեղ հեղինակը խոսում է ավելի հետ կապված մի շարք ժողովրդական ընկալումների, կիրառությունների և բանահյուսական արձագանքների մասին: Ավելի ծիսական կիրառում դիտարկելով երեք բնագավառում՝ հեղինակը փորձում է ամբողջացնել դրա մշակութային և խորհրդանշական իմաստավորումները և՛ կենցաղային, և՛ ծիսական դրսևորումների մեջ: Ըստ բանագետի՝ ավելը (ցախավելը) հարսանեկան ծեսերում խորհրդանշել են հարսնացուին, իսկ ամանորյա ծեսերում կապվելով դռան հետ սովորություններին՝ հանդես են եկել որպես քառսային ուժերին չեզոքացնող: Հեղինակը, քննելով ավելու հետ կապված արգելքները ժողովրդական կենցաղում, գալիս է այն եզրահանգման, որ ժողովուրդն այդ գործողությունն ընկալել է որպես գերբնական, իսկ ավելը՝ այսաշխարհայինն անդրաշխարհի հետ կապող միջոց: Այսպիսով, բանագետը գալիս է այն եզրահանգման, որ ավելը (ցախավելը) իմաստային հարուստ խորհրդանիշներ են, և դրանց հետ կապված հավատալիքները մինչ օրս էլ կենդանի են ժողովրդական ընկալումներում:

«Մահը հայկական ֆեյսբուքում. ավանդակա՞ն, մոդե՞ռն, թե՞ պոստմոդեռն սուգ» (էջ 109–121) հետազոտությունն ազգագրագետ Սմբատ Հակոբյանի հայկական միջավայրում առաջին անգամ նմանատիպ հետազոտություն իրականացնելու փորձն է: Հեղինակը, համեմատության մեջ դնելով սուգն ու վիշտը, և դրա արտահայտման տարածք դիտարկելով ֆեյսբուքը, հայկական

«Ֆեյսբուքյան» հուշերը, համեմատելով Արևմուտքում իրականացրած ուսումնասիրությունների և անգլիալեզու գրառումների հետ, փորձում է ցույց տալ մեր իրականության մեջ տեղ գտած գրառումների սոցիալական, մշակութային և պատմական առանձնահատկությունները: Այսպիսով, յուրաքանչյուր ժամանակահատված ունի սգալու որոշակի բնորոշիչ սոցիալական տարածվածություն և տարածք: Պոստմոդեռն շրջանում սուգը դառնում է ավել բազմազան ցանցի ներսում, և դրա դրսևորումները տարբեր են ի տարբերություն մոդեռնիզմի շրջանի, որովհետև մարդիկ պարտավորված էին հանրային դաշտում զուսպ լինել: Ազգագրագետը նշում է, որ սուգը զգացմունքային առումով դրսևորվում է միայն թաղումների ժամանակ և չի տեղափոխվում սոցիալական ցանցեր, ինչպես Արևմուտքում, որտեղ մարդիկ օգտագործել են առանց տարածքը սգալու և իրենց զգացմունքներն անկաշկանդ արտահայտելու համար: Հայ իրականության մեջ ավանդական, մոդեռն, պոստմոդեռն ժամանակները կարծես թե միախառնվել են իրար: Ոչ վաղ անցյալում սուգն ունեցել է համայնքային բնույթ, հետագայում, երբ թաղումները տեղափոխվել են սգո սրահներ, այն ստացել է մոդեռն հատկանիշներ: Սակայն թվային տեխնոլոգիաներին զուգահեռ՝ սոցիալական ցանցերը պետք է բերեին պոստմոդեռն սգալու եղանակներ, որոնք մեր իրականության մեջ բացակայում են: Այսպիսով, ըստ ազգագրագետի, սուգը զգացմունքային առումով հայկական ֆեյսբուքում մոդեռնիզմին հատուկ զսպվածությամբ է դրսևորվում, երբ մարդիկ հանրայնորեն չեն արտահայտում կորստի ցավը, սակայն այդ ամենը հասկանալի է դառնում առցանց տարածքում, որը պոստմոդեռն ժամանակի ծնունդ է:

III. «Պար և ծես»

Այս բաժնում անդրադարձ է կատարվում ավանդական որոշ պարերի առանձնահատկություններին, ինչպես նաև՝ կրած տարածվածությանը, փոփոխություններին և դրանց ունեցած ծիսական նշանակությանը: Առաջին ուսումնասիրությունը «Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում (ավանդույթ և արդիականություն)» (էջ 124–135) պատկանում է պարագետ, պ. գ. թ. Նարինե Շամամյանին, ով, անդրադառնալով Վայոց ձորի պարային մշակույթին, ներկայացնում է վայոցձորյան ավանդական պարերի կենսունակությունը հարսանեկան ծիսակարգում: Հեղինակն ուսումնասիրության մեջ օգտագործել է ոչ միայն իր կատարած դաշտային հետազոտությունների արդյունքները, այլև դրանք զուգահեռել է առկա գրավոր աղբյուրներին: Մինչև XX դ. 90-ական թվականներն այս գավառում լայն տարածում են ունեցել յայլին, քոչարին, չոբանի պարը, թելի յարը: Հարսանեկան խնջույքի ընթացքում կատարվող պարերից հեղինակն առանձնացնում է չոբանի պարը, թելի յարը և քոչարին, հարսի մենապարը և յոթ փաթը: Պարագետը նշում է, որ այսօր ավելի տարածված են դառնում ավանդական հայկական պարերի՝ թատերականացված բեմադրություններով ուղեկցվող հարսանեկան խնջույքները: Այսպիսով, հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ Հայաստանի երրորդ Հանրապետության ձևավորումից հետո Վայոց ձորում ավանդական պարերի՝ զգալի մասը դուրս է եկել կենցաղից, իսկ ավանդական պարերի պահպանման գործում նշանակալի դեր է խաղացել Արենի գյուղի «Արփա» պարի խումբը:

Հաջորդը՝ «Չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի (թաշկինակներով պար) պարերն իրանահայերի պարային մշակույթում» (էջ 136–148) պարագետ Հայարփի Անանյանի հետազոտությունն է: Փորձ է արվում ցույց տալու այս երկու պարերի բնութագրերը, պարաքայլերը և դրանց զուգահեռները Իրանում ապրող տարբեր ժողովուրդների կատարմամբ: Հեղինակը նշում է՝ չուբբազին ռազմապար է, ուստի պարում են միայն տղամարդիկ, իսկ դաստմալբազին՝ հարսանեկան, որ կատարում են կանայք: Բացի իրանահայերից՝ լուրերը և դաշդայիները նույնպես այս պարերը պարում են հարսանեկան արարողությունների ժամանակ: Թեև որոշակի ոճային տարբերություններին՝ այնուամենայնիվ, սրանք բովանդակային առումով երեք ժողովուրդների համար էլ նույնն են: Այս պարերն իրենց առանձնահատկություններով կարող են համարվել իրանահայերին բնորոշ պարային մշակույթի տարրեր: Պարագետը նշում է, որ դրանք իրանահայերի պարային մշակույթի մասն են կազմում, իսկ հայկական իրականությունում՝ որոշակի փոփոխությունների ենթարկվում, հատկապես, երբ կատարվում են պարային բեմադրություններ: Եվ արդյունքում այդ պարերն ու պարախմբերը կորցնում են բնականությունն ու ժողովրդական մշակույթի հետ ունեցած անմիջական կապը:

IV. «Բանահյուսություն և լեզվամշակույթ»

Այս բաժնի հոդվածները միջգիտակարգային են, դրանցում արծարծվում են նաև լեզվաբանական հարցադրումներ: Բանագետ-թյուրքագետ, պ. գ. թ. Սամվել Ռամազյանի «Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում» (էջ 150–171) ուսումնասիրությունը ներկայացնում է «Սասնա ծռեր» և «Քյոռօղլի» էպոսներում Քաչալ Համզայի կերպարի քննական վերլուծությունը: Հեղինակը, որոշակի ստուգաբանական վերլուծությունների ենթարկելով Համզայի անվան բնորոշիչները, այս կերպարը քննում է թյուրքական էպոսի համատեքստում, ցույց է տալիս դրա տարածվածությունը էպոսում, ինչպես նաև՝ հայկական ժողովրդական հեքիաթներում և զրույցներում: Թյուրքագետը ներկայացնում է Ժ. Դյումեզիլի առաջադրած «կույրի որդու» առասպելույթի համանման տարրերով առակայությունը «Պարսից պատերազմ» հերոսավեպում և «Քյոռօղլու»՝ արևմտյան խմբի հիմնական տարբերակներում՝ ակնհայտ դարձնելով ծագումնաբանական կապը: Այսպիսով, ուսումնասիրողն այն եզրահանգման է գալիս, որ Համզային վիպական նախորդ է հանդես գալիս «Պարսից պատերազմից» հայտնի Փիսակ-Դատաբենի կերպարը, որի ներմուծումը թյուրքական էպոս, ըստ ամենայնի, իրականացվել է թյուրքալեզու հայ աշուղների միջոցով: «Ըստ այդմ՝ «Պարսից պատերազմ» հերոսավեպից սերելով՝ հետագայում «Սասնա ծռերի» պատումներում հանդիպող անծանոթ և ոչ բնորոշ այս կերպարը հայոց էպոս է ներմուծվել «Քյոռօղլի» էպոսից»,– եզրափակում է հեղինակը (էջ 166):

Բանագետ, պ. գ. թ. Հասմիկ Մատիկյանը «Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ» (էջ 172–181) հոդվածում ներկայացնում է օրորոցի պատկերը՝ կատարելով օրորոց բառանվան լեզվաքննություն և տեքստային նյութերի ուսումնասիրություն: Հեղինակը նշում է, որ օրորոց բառը կենսունակ լինելով բանահյուսական գրեթե բոլոր ժանրերում՝ հանդես է գալիս որպես ինքնության կենսատարածք: Օրորոց հասկացությունն առաջնային պլանում խարսխվում է օրորերգերին, իսկ այդ երգերի մոգական միջոցը

ռիթմն է, որը ձևավորվում է հրումով և օրոցքի ինքնաբերական վերադարձով: Եվ ինչպես բանահյուսական մակարդակում՝ օրհնանք-մաղթանքներում, դարձվածքային կապակցություններում, առած-ասացվածքներում, այնպես էլ գրական միջավայրում՝ հեղինակային ստեղծագործություններում, գործածական է այս հասկացությունը՝ արմատավորված լինելով ժողովրդական գիտակցության շերտերում: Ուսումնասիրման տեսանկյունից արդիական և այս բաժնի վերջին՝ «Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը» (էջ 182–193) հոդվածը պատկանում է սոցիոլոգ Լուսինե Անգելուշին, որը փորձ է անում բացահայտելու Երևան քաղաքի բուհերի ուսանողների շրջանում առավել պահանջված լեզուները, դրանց սովորելու պատճառներն ու նպատակները: Տարիքային տարբեր խմբերի հետ հարցումներ կատարելով՝ հեղինակը ներկայացնում է որոշակի տոկոսային հարաբերություններով աղյուսակներ: Ինչպես 1976 թվականին, այնպես էլ 2018 թ. հայերենն ունի գերակա դեր Երևանի ուսանողության համար: Հաշվի առնելով, որ ռուսերենն այլևս սոցիալական դիրքի ցուցիչ չէ, ուստի ուսանողներն այժմ այդքան ժամանակ չեն տրամադրում ռուսերենի գիտելիքները զարգացնելուն, որքան անգլերենի համար, քանի որ միջմշակութային հաղորդակցության ամենատարածված լեզուն անգլերենն է, այնինչ 1976 թ. ուսանողության շրջանում հայերենից հետո երկրորդ լեզուն եղել է ռուսերենը:

V. «Պոլսահայոց հիմնախնդիրներ»

Հատորի այս բաժինը ներկայացնում է XIX դ. երկրորդ կեսի Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական զարգացումների պատմությունը, որը բազմիցս առնչվում է արևմտահայության սոցիալ-քաղաքական և իրավական իրականությանը: Այս առումով ուշագրավ է պատմաբան-արևելագետ Սալվինե Մարկոսյանի *«Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի Ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.)» հետազոտությունը (էջ 196–205), որում բարձրաձայնում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են 1856–1863 թթ. արևմտահայերի Ազգային սահմանադրության հաստատման շուրջ մղվող պայքարի պատճառները, ազգային ինքնագիտակցության զարգացման կարևորությունը, ազատագրական գաղափարի տարածումը: Այս փաստաթղթի շնորհիվ՝ հայ համայնքը ձգտում էր կառավարել իր ներքին կյանքը: Մեծ ջանքերից հետո վավերացնում է փաստաթուղթը, որի գործադրումը նպաստում է ազգային ինքնագիտակցության զարգացմանը:*

VI. «Հաղորդումներ»

Ժողովածուի այս մասում զետեղված տեղեկատվական ակնարկների թեմատիկան շատ լայն է՝ Հառիճի հնագիտական պեղումներից մինչ խաչքարերի ուսումնասիրության մեթոդիկա: Հնագետ Մարիամ Սարիբեկյանը *«Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից» հետազոտության մեջ (էջ 208–213) անդրադառնում է հուշարձանի՝ տարածաշրջանում ունեցած կարևորությանն ու հնագիտական նշանակությանը: Պեղումների արդյունքում հայտնաբերվել են վաղբրոնզեդարյան բնակատեղի, բրոնզ-երկաթեդարյան դամբարանադաշտ, միջնադարյան բնակատեղի և եկեղեցի: Այսպիսով, ըստ հնագետի, այս հուշարձանն ունի միջտարածաշրջանային մեծ*

նշանակություն, ուստի շատ կարևոր է այդ գտածոների մանրամասն ուսումնասիրումը և հրատարակումը:

«Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ» ուսումնասիրության մեջ (էջ 214–224) ֆրանսահայ ճարտարագետ Հարություն Խաչատուրյանն անդրադառնում է այն մեթոդական միջոցներին, որոնց հիման վրա պետք է լինի ցանկացած խաչքարագիտական մշակման աշխատանքներ՝ օգտագործելով երեք ոլորտ՝ հնագիտություն և արվեստի պատմություն, ժառանգության կառավարում և գբոսաշրջություն: Հեղինակն առանձնացնում և կարևորում է ուսումնասիրության թեման, մոտեցումները, գործիքները, տվյալների որակը և հաշվառումը: Այս աշխատանքն արդիական է այնքանով, որ եկեղեցիներում, մասնավորապես՝ XIX դ., նույնիսկ վերանորոգված, գերեզմանոցներում, ժողովրդի մոտ բացակայում է հարգանքը ժառանգության նկատմամբ, ուստի անհրաժեշտ է հստակ քաղաքականություն վարել և կանգնեցնել մշակութային աղետը:

VII. «Մեր հոբելյարները»

Այս բաժինը նվիրված է 75-ամյա վաստակաշատ մանկավարժ, ազգագրագետ, լեզվաբան, բանագետ, բանահավաք, հրապարակախոս, պ. գ. դ. Հակոբ Զոլաքյան գիտնականի վաստակին: Պատմաբան, պ. գ. թ. Արման Մալոյանը «Հակոբ-Զոլաքյան–75» հոդվածում (էջ 226–231) ներկայացնում է գիտնականի կյանքն ու բեղուն գործունեությունը: Նշվում է, որ Հ. Զոլաքյանը հեղինակ է տարբեր բնագավառներին վերաբերող 60 աշխատությունների, շուրջ 60 գիտական հոդվածների, 200 պատմվածքների և գեղարվեստական ակնարկների: Նրա հրատարակած գրքերի մասին գրվել են տասնյակ գրախոսություններ: Հ. Զոլաքյանի բեղուն գործունեությունը հայագիտությանն անմնացորդ նվիրյալի փայլուն օրինակ է գիտակրթական տարաբնույթ և լայն հանրույթի համար:

Ամփոփելով՝ ասենք, որ ժողովածուն հարուստ է հայոց պատմամշակութային ժառանգության զանազան ոլորտներին վերաբերող հոդվածներով: Հատկանշական է տրամաբանորեն առանձնացված ենթաբաժինները, որոնք էլ իրենց հերթին առանձնանում են ըստ իմաստային ոլորտների և հրատարակած ուսումնասիրությունների մեթոդաբանության:

Անահիտ Խեչոյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի ավագ լաբորանտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գրականություն, բանահյուսություն, ազգագրություն: Հեղինակ է 4 հոդվածի: ORCID:0009-0005-6509-8947. khechoyan.anahit@mail.ru